№ 62 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՑԻՍԻ 29 — 1897 — ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՑԻՍԻ 29 № 62

ԹՍԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшахъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
խոշոր քանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

Մարիամ Մինասեան, Ալեքսան, Յովհաննէս, Եգօր և Պօղոս Մելիքեանները խորին վշտով յայտնում են ազգականներին և ծանօթներին առաջինի սիրելի որդու և երկրորդների անմոռանալի եղբօր՝

ԱՐՏԵՄ ՊԵՏՐՈՍԵԱՆ ՄԵԼԻՔԵԱՆԻ

մահը և խնդրում են չնորհ բերել յուղարկաւորութեան, որ լինելու է հինգշաբթի, մայիսի 29-ին, առաւօտեան ժամի 10-ին, իրանց բնակարանից, Ակիմովի փողոց, № 19, դէպի Նորայէնի եկեղեցին, իսկ այնտեղից՝ խօջիվանքի գերեզմանատուն:
Ամբիծքը չորեքշաբթի, մայիսի 28-ին, երեկոյեան ժամը 7-ին: 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քարացած սրտեր. Զինադադար և խաղաղութիւն. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մատենագրութիւն. Նամակ Սուրմից. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Բոլգարիա. Նամակ Շվէդիայից. Նամակ Պարսկաստանից. — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՐՍԱ. — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Շվէյցարիայից.

ՔԱՐԱՑԱԾ ՍՐՏԵՐ

—

Մի քանի անգամ արդէն թէ Թիֆլիսում և թէ Թիֆլիսից դուրս՝ կովկասի զանազան քաղաքներում փողեր են հաւաքվել յօգուտ Երուսաղէմի, կամ յօգուտ այդ վանքի պարտքի վճարման: Երուսաղէմի վանքն էլ, հետևելով հայոց բոլոր վանքերի սովորութեան, սկսած Էջմիածնից մինչև ամենափոքր մենաստանները, ի հարկէ, ազգին երբէք կանոնաւոր հաշիւ չէ տուել և չէ տալիս՝ իր պարտքի և հանգանակած փողերի մասին: Տէրը նրա հետ:

Այլ ևս չը սպասելով ոչ մի օրինաւոր հաշիւ՝ մենք, և մեզ հետ միասին ամբողջ ազգը, իրաւունք ունէինք յուսալու, որ այդ հին վանքը, որ անյիշատակելի ժամանակներից արդէն կլանում է բազմաթիւ հայ ուխտաւորների ջերմեռանդութեան պտուղները, գոնէ մի այսպիսի ընդհանուր, պատմական մեծ աղետի բոպէին՝ կը թօթափի իր սովորական անտարբերութիւնը և մասնակից կը լինի ընդհանուր գործունէութեան: Տարաբաղդաբար, մենք սխալված ենք. սխալված են և նրանք, որոնք մեզ նման յոյսեր ունէին: Հարիւրաւոր, հազարաւոր հայ որբերը, որոնք քաղաքական ալեկոծութիւնների շնորհիւ մնացել են առանց խնամքի և դուրս են քշվել արիւնլուայ հայրենիքից, ոչինչ օգնութիւն չեն գտնում հայոց այդ նշանաւոր վանքում, որի բազմաթիւ միաբանների աչքերի առաջ՝ օտար միսիոնարները զբաղված են այդ որբերի խնամատարութեամբ: Գովելի՞ է, չէ՞...

Գուցէ դա, շատերի կարծիքով, մեծ, բազմածախս գործ է, և վեր Ս. Յակոբի միաբանների խելքից և շնորհքից: Համաձայն ենք: Բայց մենք մատնանիշ կանենք մի ուրիշ համեստ գործի վրա.—այս րոպէիս Երուսաղէմի վանքում, իբր աքսորականներ, հայոց գործի համար քշված՝ ապրում են երեք յայտնի հայ հոգևորականներ՝ համազգային համակրանքի արժանացած Մատթէոս Իզմիրլեան, և նրա հետ միասին Ղևոնդ արքեպիսկոպոս Շիշմանեան ու Ներսէս վարդապետ Խարախանեան: Տկար, վատառողջ Իզմիրլեան՝ Երուսաղէմի վանքում, իր երկու վիճակակիցների հետ միասին պահվում է այնպիսի պայմաններում և այնպիսի խուցերի մէջ, որ նրա առողջութեանը վտանգ է սպառնում.. Արդ, հարցնում ենք, միթէ հայոց ազգը, այն հասարակութիւնը, որ մի քանի անգամ փողեր հանգանակեց յօգուտ այդ վանքի, իրաւունք չունի պահանջելու, որ Երուսաղէմը՝ այդ աքսորականներին լաւ պայմանների մէջ պահի, եթէ ոչ իր սեփական փողերով, գոնէ այն փողերով, որ ռուսահայերից են հանգանակված... Եթէ հազարաւոր որբերին պատսպարել և դաստիարակելը, ասում ենք, այդ միաբանութեան շնորհքից վեր է, միթէ երեք աքսորված հոգևորականների մարդավարի պահպանութիւնն էլ վեր է նրա ոյժից, նրա քաղաքացիական հասունութիւնից: Միթէ, ճշմարիտ, այդ հոգևոր հայրերը կազմված են ոչ թէ մսից և արիւնից, այլ Պալեստինի սեւատեսիլ քարերից...

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ՇՎԷՅՑԱՐԻԱՑԻՑ

—

Ժընէվ, մայիսի 27-ին

Հարևան Գերմանիայում արտակարգ յուզմունք է: Ռիխտերի ձայնը իր խոր լռութիւնից յետոյ՝ նորից որոտաց բայխստագում: Արտասանվեց մէկն այն կլասիկական ճառերից, որոնք մահացու հարուած են տալիս ռէակցիային և յոյս ու ոգևորութիւն են տարածում բոլոր առաջադիմականների շրջաններում: Գերմանացին համբերող է, անհամեմատ աւելի համբերող ու հնազանդվող, քան իր հարևան ֆրանսիացին. վերջինս դարերից ի վեր ճանաչված է իբրև յեղափոխական, յանկարծակի յեղաշրջող մի ժողովուրդ, այն ինչ առաջինն իր ամբողջ էութեամբ էվոլիւցիոնիստ է, դանդաղ առաջադիմութեան ջատագով: Մինչև որ դանակը ոսկորին չէ հասնում, մինչև որ տիրող չարիքները չեն հասնում իրանց գագաթնակէտին, գերմանացին բողոքի ձայն-ծպտուտ չէ հանում: Այն պահպանողական և միանգամայն յետադէմ մինիստրութիւնը, որ այսօր իշխում է Գերմանիայում, տաքարիւն և ըմբոստ ֆրանսիացիները վաղուց տապալած կը լինէին:

Այսօր սակայն մի արտասովոր իրարանցում է ընկել Վիլհելմ II-ի պետութեան մէջ: Մինիստրութիւնը, կառավարութեան ներկայացուցիչները ամօթալի պարտութիւն կրեցին, պահպանողականները, կեղծ-լիբերալները սեացան, առաջադիմականները, ժողովրդի լուսամիտ տարրերը ցնծութեամբ յաղթանակեցին... Ի՞նչ էր այդ. ո՞րն էր արդեօք հերթական հարցը: Ընթերցողը թերևս կարծէ, որ վիճաբանութիւնների առարկան Վիլհելմ կայսրի արտաքին քաղաքականութիւնն է: Ո՛չ, դժբաղդաբար, ո՛չ: Գերմանացին, միջին գերմանացին հակում չունի օտարի ցաւերին կարեկից լինելու: Տարիներ անցան. արևելքում սարսափները յաջորդեցին իրար, Հայաստանը շարունակ արիւնլուայ եղաւ, ուրիշ պարլամենտական ազգերը բողոքեցին անընդհատ,—Գերմանիան լուռ էր, գերմանական բայխստագում ոչ մի բողոք. նոյն իսկ Բէբէլները, յանուն բոլոր ճնշվածների ազատութեան պոռացողները, պապանձվել էին: Այսօր, երբ թշգուկ Ցունաստանը սուլթանական անհաչիւ զընդերի դիմաց՝ պարզապէս զոհ է հանդիսանում վիլհելմական քաղաքականութեան, երբ արդէն ափաչկարա է, որ միայն Վիլհելմի զօրաւոր ազդեցութեամբ մեծ-մարդասպանը հրապարակ ելաւ և ջարդ տուեց հելլէններին,—այսօր ևս բայխստագը լուռ է: Ոչ մի ծպտուն... Սա մի զարմանալի անտարբերութիւն է բոլոր ճնշված ազգերի վերաբերմամբ, մի անտարբերութիւն, որին մատնված են բայխստագի բոլոր պատգամաւորները՝ սոցիալիստից սկսած մինչև յետին պահպանողականը:

Մի ներքին խնդիր է այսօր, որ յուզում է գերմանացիների սիրտը: Հաղուադէպ է այդպիսի մի կենդանութիւն բայխստագում. խիստ սակաւ են պատահում այդտեղ ցնցող տեսարաններ, որոնք այնքան յաճախ են լինում ֆրանսիական կամ իտալական պարլամէնտում: Երբեմն-երբեմն մի Բէբէլ կամ Լիբկնեխտ բարձր աղմուկներով ընդհատում են բայխստագում տիրող միօրինակ, տաղտկալի անդորրութիւնը: Բայց ահա ռէակցիան աւելի խստացաւ, տարածեց իր թևերը, պրուսական կամայականութիւնները չափ ու սահման անցան: Նորից փորձեց կառավարութիւնը յաւիտենակել ժողովրդի վաղուց ի վեր ձեռք բերած իրաւունքները: Քաղաքական դումարումների ազատութիւնը վտանգված էր: Ահա մի հարց, որ անհամեմատ աւելի մօտ է գերմանացու սրտին, քան թէ հայաստանցու ազի արցունքները, քան թէ Ցունաստանի օրհասական ճիչը: Ոտքի կանգնեց առաջադիմական Գերմանիան, ազատ մտածող կուսակցութիւնը հրապարակ հանեց իր հեղինակաւոր ներկայացուցչին՝ Ռիխտերին: Ահա նրա ճառից մի քանի կէտեր. «Պարոններ. չը կայ այսօր մեզ մօտ մի գիտակցական կամք, չը կայ մի ամբողջական ոյժ, մի ոյժ՝ որ գիտակցօրէն և աչալուրջ հեռատեսութեամբ հետևէր իր նպատակներին և ոչ թէ բօպէական դրդումներով ղեկավարվէր: (Ծափահարում են ձախակողմեանները): Մենք ունենք մի մինիստրութիւն, որ բացարձակ հոմօժէն ու յետադէմ է և որ միշտ ձգտում է հակառակ ուղղութեամբ գործել, քան թէ բայխստագն է պահանջում: Ո՞վքեր են դրանք: Նայեցէք ձեր շուրջը, դուք կը տեսնէք միայն ճկուն, դիւրաթեք կուրտիզաններ ու հուսարներ—հլու հպատակներ, որոնք ի վերուստ բզված ամեն մի հրահանգի կուրօրէն պաշտպան են հանդիսանում: Վարձկան աստիճանաւորներ... ահա թէ ում ձեռքումն է Գերմանիայի ղեկը: (Բուռն ծափահարութիւն): Մենք Պրուսիայում չենք ապրում, պարոններ, մենք ապրում ենք գերմանական դաշնակցական պետութեան մէջ. Պրուսիան է, որ դինաստիա ունի, գերմանական պետութիւնը չունի ոչ մի դինաստիա, և կայսրութիւնը Գերմանիայում աւելի հին չէ, քան բայս ս

ԶԻՆԱԴԱԴԱՐ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ

—

«Ինչպէս յայտնի է, ԴոմՕկօսի կուռից յետոյ, պատերազմական գործողութիւնները դադարեցին Թագաւոր կայսրի սուլթանին ուղարկած հեռագրի շնորհիւ: Կայսրը, ինչպէս գրում է „Sémaphore“ լրագրի Կ. Պոլսի թղթակիցը, իր հեռագրի մէջ խընդրում էր, հրամայողական ձևով, դադարեցնել արիւնհեղութիւնը: Չը նայելով թիւրքաց զինուորական կուսակցութեան պարծենկոտութեանը, սուլթանը չէր կարող մերժողական պատասխան տալ. նա անմիջապէս հրաման տուեց էդհէմ փաշային դադարեցնել պատերազմական գործողութիւնները և Կ. Պոլսի լրագիրներում տպել տուեց ծանուցումներ, թէ ինքն, սուլթանը, այդպէս է գործում զուտ մարդասիրութիւնից դրդված և Ցարի „խնդիրքներին“ զիջանելով: Բանն այն է, որ Իզմիդ-Քիօսկում սկսեցին շատ անհանգիստ լինել, տեսնելով, որ Բոլգարիան զէնքի է կանչում իր զօրքերը և ենթարկվում է Ռուսաստանի գրգռող ազդեցութեանը: Ֆարսալի կուռից յետոյ ռուսաց դեսպան Նէլիդով, իր կառավարութեան անունից, յայտնեց սուլթանին, թէ պէտք է դադարեցնել պատերազմական գործողութիւնները: Թիւրքերը չը լսելուն տուին Նէլիդովի խօսքերը: Իսկ երբ Բ. Դուռը պատասխանեց վեց դեսպանների յայտագրին (որով առաջարկում էին զինադադար և միջամտութիւն) թէ միջամտութեան հարցը ինքն կը քննի Դարբան-Բայրամի ատենից յետոյ, և ընդ ինքն չէ կարող զինադադար ընդունել այն ժամանակ, երբ յոյները յարձակողական դիրք են բռնում Էպիրոսում, Ռուսաստանի կատաղութեանը չափ չը կար:

„Դեսպան Նէլիդով յայտնեց սուլթանին, որ եթէ պատերազմը շարունակվի, Ռուսաստանը այլ ևս չէ կարող կանգնեցնել Բոլգարիային, Սերբիային և Չէրնոգորիային և այն ժամանակ Թիւրքիայի դրութիւնը անելանելի կը լինի: Մի և նոյն ժամանակ սուլթանը Սոֆիայի Թիւրքաց գործակալից յուսահատական հեռագիրներ էր ստանում բոլգարական կառավարութեան բռնած ուղղութեան մասին: Այդ հեռագիրները այնքան նշանաւոր էին, որ սուլթանը շտապով բոլգարական դեսպանատուն ուղարկեց իր քարտուղարներից մէկին, երկու օգնականներով, բացատրութիւն պահանջելու պ. Մարկովից: Այդ վերջինի խուսափող պատասխանները, որը ասում էր, թէ ինքն ոչինչ չը գիտէ ինչ է կատարվում բոլգարական պետական խորհրդում, աւելի ևս ստստկացրին սուլթանի կասկածները: Այնպէս որ, երբ ստացվեց ռուսաց կայսրի սպառնական հեռագիրը, սուլթանը հասկացաւ, թէ անցել է ձգձման տակտիկան և թէ պէտք է ընդունել պետութիւնների միջամտութիւնը, եթէ չէ ուզում Ռուսաստանին զայրացնել:

„Ռուսաստանի ուղղութեան այդ փոփոխութիւնը չը պէտք է զարմացնի ոչ ոքին, եթէ աչքի առաջ ունենանք հետևեալ հանգամանքը. վերջերս ռուսները գժգոհութեամբ տեսնում էին, որ գերմանական ազդեցութիւնը Իզմիդ-Քիօսկում գերակշիռ դեր է խաղում և սուլթանը, որին ռուսաց դիպլոմատները կարծում էին թէ ձեռքումն ունեն բռնած, հետևում է Գերմանիայի խորհուրդներին: Միւս կողմից, տեսնում էին, որ յունաց Գէորգ թագաւորի գահը մեծ վտանգի մէջ է և Ցունաստանի կատարեալ կործանումը յեղափոխութիւն առաջ կը բերէր Աթէնքում: դրա հետևանքը այն կը լինէր, որ կարտաքսէին ոչ միայն թագաւորին և թագաժառանգին, այլ և ամբողջ թագաւորական ընտանիքը: Բացի դրանից, Ռուսաստանը չէր կարող դաւաճանել իր պատմական աւանդութեանը և թողնել, որ ոչնչանայ մի օրթոդոքս ժողովուրդ»:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

—

«Смутное время и Дворцовый переворотъ въ Костантинополѣ»—В. Теплова («Խառն ժամանակ և պալատական յեղափոխութիւն Կ. Պոլսում»—Վ. Տէպլովի.) Պետերբուրգ, 1897 թ. 170 երես, in 12⁰, գինը 1 ռուբլի:

Յայտնի է որ Կ. Պոլիսը 1876 թվին ներկայացնում էր քաղաքական փոփոխութիւնների և արիւնահեղ եղեռնագործութիւնների տեսարան: «Երիտասարդ Թիւրքիա» կուսակցութիւնը լիուլի վայելելով անգլիական դեսպան Էլլիոտի համակրանքներն ու հովանաւորութիւնը, սկսեց գործադրել իր ծրագիրները Թիւրքիայի վերածնութեան անունով: Նախ տեղի ունեցաւ սոֆթաների ապստամբութիւնը, ապա գահընկեց եղաւ սուլթան Աբդիւլ-Ազիզ և սպանվեց Զըրաղանի

պալատում։ Սարսափահար Մուրադ V բարձրացաւ օսմանեան գահը, բայց իսկոյն ցոյց տուեց խելագարութեան նշաններ։ Զերքէզ Հասան անունով մի կատաղի օֆիցէր մաւ մինիստրների խորհրդակցութեան սենեակը և բարբարոսաբար սպանեց պատերազմական մինիստր Հիւսէյին-Ա.Ալի փաշային, արտաքին գործերի մինիստր Ռէշիդ-փաշային, ծանր վէրք հասցնելով Կայզէրլի փաշային։ Մուրադ V թագաւորեց երեք ամիս. նրան էլ գահընկէց արին, պատճառ բերելով խելագարութիւնը, և բանտարկեցին նոյն Զըրաղանի պալատում։—Թիւրքիայի գահը բարձրացաւ Աբդիւլ-Համիդ, հեղ, բարեբարոյ հակումներով, խոստանալով իր հպատակներին բիւրաւոր բարիքներ, ազատամիտ օրէնքներ։ Նա հրատարակեց սահմանադրութիւն, ինքը բացաւ օսմանեան առաջին պարլամէնտը և գահական ճառի մէջ բացատրեց թէ ինչ բան է լաւ վարչութիւնը. այդպիսի վարչութեան գլխաւոր պայմանն է, որ կառավարողների և կառավարվողների մէջ փոխադարձ հաւատ լինի։ Ապա սուլթանը յայտնում էր, որ ինքը համոզված է թէ եւրոպական պետութիւնների աջողութիւնները հիմնված են այն պարզ հանդամանքի վրա, որ Եւրոպայում գոյութիւն ունեն ազատ հիմնարկութիւններ, մինչդեռ Թիւրքիան տանջվում է միապետական կարգերից, ուստի և տալիս էր օսմանեան երկրին սահմանադրութիւն...

Դա այժմեան սուլթան Համիդն էր...

Պ. Ցեպլօվ մանրամասն և գրաւիչ ոճով նկարագրում է այս բոլոր դէպքերը։ Նրա նկարագրութիւնը առանձին հետաքրքրութիւն է ներկայացնում այն պատճառով որ ինքը, հեղինակը, ականատես է եղել անցքերին, այն էլ ոչ իբրև պարզ ականատես, այլ իբրև Կ. Պոլսի ռուսաց դեսպանատան առաջին քարտուղար։ Ինչպէս յայտնի է, նոյն 1876-ին Բալկանեան թերակղզին ահաւոր մարտ էր մղում Թիւրքիայի դէմ. Բոսնիայի և Հերցեգովինայի ապստամբութիւնը շարունակվում էր, Բոլգարիայում սարսափելի կոտորածներ եղան և վերջը Սերբիան ու Չերնոգորիան պատերազմ հրատարակեցին Թիւրքիայի դէմ։ Այս անցքերը պ. Ցեպլօվ չէ նկարագրում. նա միայն պատմում է այն, ինչ տեղի ունէր Կ. Պոլսում։ Շատ հետաքրքրական են նրա պատմածները երիտասարդ Թիւրքերի մասին։ Այդ կուսակցութիւնը այժմ իրան հռչակում է ազատամիտ, եւրոպական կարգերին սիրահար։ Մի և նոյնը նա կրկնում էր և 1876-ին։ Բայց հեղինակը վերցնում է երիտասարդ Թիւրքերի դիմակը և ցոյց է տալիս թէ դրանք պարզապէս մահմետական մոլեռանդութեան ներկայացուցիչներ էին, որոնք դիմակաւորվելով եւրոպական ազատ հիմնարկութիւնների անունով, իսլամական հայրենասիրութիւն էին քարոզում։

Հեղինակը, իբրև անդամ մի դիպլոմատական մարմնի, որ գործ է ունեցել պաշտօնական Թիւրքիայի հետ այնպիսի ժամանակ, երբ Եւրոպան, բայց մանաւանդ Ռուսաստանը, եռանդուն կերպով պահանջում էր քրիստոնեաների ազատութիւնը, դրականապէս յայտարարում է որ Թիւրքիայի գրաւոր խոստումները ոչինչ արժէք չունեն։ Խօսելով այն մասին, որ Թիւրքիայի կառավարութիւնը սահմանադրութիւն հրատարակեց նոյն այն օրը, երբ Կ. Պոլսում կազմվում էր եւրոպական կոնֆերէնցիա՝ քրիստոնեաների համար բէֆորմներ մշակելու նպատակով, պ. Ցեպլօվ ասում է. «Սահմանադրութեան հրատարակումը, այն էլ նոյն օրը, երբ եւրոպական լիազօրները հաւաքվել էին Թերանէի քիոսկում, մի յանդուգն պատասխան էր Բ. Դրան կողմից Եւրոպայի պահանջների դէմ։ «Ի՞նչ բէֆորմներ էք պահանջում դուք—որպէս թէ ասում էին Թիւրքերը—ձեր սիրելի քրիստոնեաների համար, երբ մենք ինքներս մեր սահմանադրութեամբ տալիս ենք նրանց, մեր սեփական կամքով, աւելի նշանաւոր իրաւունքներ, քան ձեր պահանջներն են»։ Կարծես Եւրոպան չէր իմանում թէ իսկապէս ինչ արժէք ունեն Բ. Դրան գրաւոր խոստումները։ Կարծես Եւրոպային յայտնի չէր թէ իրապէս ինչ հետևանքների են բերել այն բոլոր փարթամ, չքեղ խոստումները, որ այնպիսի առատութեամբ չռայլվում էին 1839 թ-ի խատը-շերիֆի և 1856 թ. խաթթը—հիւմայունի մէջ և այլ բազմաթիւ թղթերի մէջ, որոնց անունները Աստուծուն են յայտնի և որոնք գրվում էին այսպէս ասած ad usum delphini, իսկ Թիւրք կառավարութիւնը նրանց պարտաւորական չէր համարում իր վերաբերմամբ» (էր. 114—115)։

Ի դէպ։ Նոյն այս ժամանակամիջոցին նուիրված մի այլ գրութիւն, որի հեղինակն է ֆրանսիական մի յայտնի դիպլօմատ, անցեալ տարի լոյս տեսաւ «Русская Старина» ամսագրի մէջ։ Սա էլ շատ մօտիկ ծանօթ է արևելեան քաղաքականութեան և, չը նայած իր Թիւրքասէր կոմսներին, 1876-ի անցքերի քննադատութեան մէջ ապացուցանում է, որ Թիւրքիան անկարող է բէֆորմներ մտցնել, իսկ նրա այն ժամանակվայ թշուառութիւնների պատճառը Անգլիան է, որ ամեն կերպ աշխատում էր ցոյց տալ Ռուսաստանին թէ ոչ մի պետութիւն իրաւունք չունի խառնվել Թիւրքիայի ներքին գործերի մէջ, ինչպէս սահմանել է Պարիզի դաշնադրութիւնը։ Սակայն ֆրանսիացի դիպլօմատը իրապէս անկարելի է համարում օսմանեան պետութեան ամբողջութեան դաղափարը։ Նա ասում է որ Բալկանեան թերակղզում թափված արեան դետերից յետոյ անհնարին է, որ քրիստոնեայ և մահմետական նորից սկսեն հաչտ ապրել միմեանց հետ՝ մի և նոյն իշխանութեան տակ։ Ուստի նա համակրում է Ռուսաստանին, որը, ականջ չը դնելով Անգլիայի բողոքներին, պատերազմ հրատարակեց Թիւրքիայի դէմ և ցոյց տուեց որ օսմանեան պետութեան ամբողջութիւնը խախտելն է միակ միջոցը երկու անհաչտ տարրերին—մահմետականներին և քրիստոնեաներին—խաղաղ կեցութիւն չնորհելու համար։

Յօդուածը գրված է 1877 թ-ին։

Լ.

ՆԱՄԱԿ ՍՈՒՐԱՄԻՑ

—

Մայիսի 15-ին

«Новое Обозрѣніе» լրագրի ներկայ տարվայ յունվարի 18-ի համարում տպված էր Սուրամի հայոց եկեղեցու նախկին երէցփոխ Ստեփան Գրձելեանի հետևեալ նամակը. «Յունվարի 6-ին, Զրօրհնէքի օրը, Սուրամի հայոց եկեղեցու հոգևորականութիւնը կատարում էր Զրօրհնէքի հանդէսը։ Այս ժամանակ ներկայ գտնվող Սուրամի ոստիկանական պաշտօնեան ստիպում էր քահանաներին չուտով վերջացնել Զրօրհնէքի ծէսը, որին Յովսէփ քահանայ Առիւծեանը,—համբերութիւնից դուրս գալով,—հակաճառեց, նկատելով թէ եկեղեցական կանոններով անկարելի է աւետարանը կրճատել։ Սրան պէտք է աւելացնել, որ այսպիսի վարմունքը ոստիկանական պաշտօնեայի կողմից առաջինը չէ և որ նաև անցած տարիները, մեզ անհասկանալի պատճառներով, անբարականութիւն էր արտայայտում հանդիսի երկարատևութեան դէմ։ Ոստիկանի այս գործողութեան վրա հարկաւոր է ուշադրութիւն դարձնել ում հարկն է»։

Այս նամակի առիթով ոստիկանական պրիստաւը բացատրութիւն էր ուզել քահանաներից և նրանք տուել էին նրան հաւատիագիր այն մասին, որ երէցփոխի հրատարակած նամակը հիմնովին չինծու է և հեղինակի ֆանտազիայի արգասիք։ Ներկայացնելով քահանաների այդ հաւաստիագիրը Թիֆլիսի կօնսիստորիային՝ պրիստավը խնդրել էր հրաժարեցնել Գրձելեանին, զրպարտութեան համար, պաշտօնից։ Իմանալով այս, երէցփոխը իր կողմից բողոքեց քահանաների դէմ, առարկելով, որ ինքն այդ նամակը հրատարակել է ոչ մինակ իրանից, այլ Յովսէփ քահանայ Առիւծեանի առաջարկութեամբ ու հաւանութեամբ։ Կօնսիստորիան այս գործը յանձնարարել էր քննել Քութայիսի գործակալ Դաւիթ քահանայ Եարալեանին, որը, սակայն, աւելորդ համարեց հարցնել երէցփոխի վկաներին ու հիմնվելով լոկ քահանաների երկու ազգականների ցուցմունքների վրա, որոնք ապացուցին, որ իրանք յունվարի 6-ին, մօտիկ կանգնած լինելով պրիստավին. ոչ մի ստիպողական խօսք չեն լսել նրա բերանից—իր քննութեամբ մեղաւոր ճանաչեց երէցփոխին, կամենալով այսպիսով հովանաւորութիւն ցոյց տալ Առիւծեան քահանային։

Երէցփոխ Գրձելեան բողոքեց քննիչի դէմ. ինքը հոգևոր իշխանութիւնը միակողմանի զբաղեցնելով կատարած քննութիւնը՝ գործը նորից յանձնեց քննել Թիֆլիսեցի Աշոտ քահանայ Թէմուրազանին։ Երկրորդ քննութեան ժամանակ, վկաների մեծամասնութեան (մօտ 8 հոգի) ցուցմունքներից պարզվեց, որ վերոյիշեալ նամակը տպագրվել է Առիւծեան քահանայի դըրդմամբ։ Նա էր բարձրացրել այդ հարցը, դիմել փաստաբանին խնդրելով՝ բողոք կազմել պրիստավի դէմ՝ իշխանութեան ներկայացնելու համար, որը, սակայն, վերջինը մերժել էր. նա էր նամակի հրատարակվելու պատասխանատուութիւնը իր վրա վերցրել, հաւանել նամակը, նոյն իսկ պարծեցել, որ ինքը նկատողութիւն էր արել պրիստավին ու. այդ լուրը տարածողներն եղել են իրանք քահանաները։ Մէկ վկան միայն ցուցմունք տուեց, որ ինքը նախկին տարիները լինելով Յորդանանի վրա՝ յիրաւի լսել էր պրիստավից ստիպողական խօսքեր։ Կօնսիստորիայի վճռի մասին կը հաղորդենք։ Լսում ենք, որ պրիստաւը գործը անց է կացրել դատարան։

Ց. Գրիգորեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Թիֆլիսի քաղաքային ուպրավայի մէջ մշակվում է մի ծրագիր, որով քաղաքի բնակիչները պէտք է բնակարանի հարկ վճարեն և իրաւունք ունենան, երեք տարի հարկատուութիւնից յետոյ, ստանալ ընտրողական իրաւունք։ Այդպիսով, քաղաքային ընտրութիւններին, միւս ցեղ ունեցողների հետ միասին, կարող կը լինեն մասնակցել և անկեցիները։

—

Երկուշաբթի, մայիսի 26-ին, Թիֆլիսի դատաստանական պալատում սկսվեց քաղաքային կրեդիտային բանկի նախկին կառավարիչ իշխան Ն. Ամատունու, և նոյն բանկի նախկին հաշուապահ Ամիրաղովի գործի քննութիւնը։ Նախագահում է Ֆրանցով, անդամներ են՝ Գլուշանովսկիյ և Օպատվցեվ, մեղադրում է պրոկուրորի օգնական Լեմմերման։ Այդ գործի մանրամասնութիւնները լաւ ծանօթ են մեր ընթերցողներին, ուստի կրկնութեան մէջ չենք մտնի։ Դժգոհ նահանգական դատարանի վճռից, թէ մեղադրվողները և թէ պրոկուրորը բողոք տուեցին դատաստանական պալատին, որտեղ էլ այժմ քննվում է այդ գործը։ Ինքը իշխան Ամատունի ներկայ չէ դատավարութեան (նա հիւանդութեան պատճառով ուղևորվել է արտասահման)։ Երկուշաբթի օրը կարդացվեց զեկուցումը, և հարց ու փորձի ենթարկվեցին վկաները. երեքշաբթի օր, մայիսի 27-ին, խօսեցին պաշտպանները և պրոկուրորը։ Պրոկուրորը իր ճառը վերջացրեց՝ առաջարկելով աւելի խիստ պատիժ նշանակել։ Երէկ, մայիսի 28-ին, դատաստանական պալատը արձակեց հետևեալ վճիռը. զրկել իշխան Ամատունուն անձնական, առանձնակի և կեցութեան բոլոր իրաւունքներից և աքսորել՝ բնակութեան համար Սիբիրի Տոմսկի նահանգը. իսկ Ն. Ամիրաղովին 8 ամսով ենթարկել կալանաւորութեան ուղղիչ բաժնում։ Մանրամասն վճիռը առաջ կը բերենք միւս անգամ։

—

Կ. Պոլսի հայոց լրագիրները հաղորդում են հետևեալը. «Գերմանիոյ Կարմիր խաչի ընկերութեան անդամներէն Մր. Մ. Ցիմբը, մարտ 29-ին Զմշկածաց գացեր և իր հաշուոյն որդեգրեր է 40-է աւելի անհայր և անմայր որբեր, իբրև որ «բացառիկ օրէնք»։ Մի քիչ ազմուկ, մի քիչ սպառնական արտադրութիւն աշխատաւորների շէֆերի կողմից—և ահա բարձրանում է վայնասունն ու հարայ հրոցը բիւրոկրատների բանակում ու Umsturz! բէժիմը վտանգված է, բացառիկ օրէնքներ... Այնքան ողորմելի ու կարճատես են նրանք, որ անկարող են ըմբռնել փաստերի ամենապարզ տրամաբանութիւնը։ Ոչ մի բան այնքան չէ նպաստում սոցիալիստական պրոպագանդային, որքան այդ բռնի հակասահմանադրական միջոցները, ոչինչ այնքան չէ ուժեղացնում աշխատաւորների կուսակցութիւնը, որչափ բիւրոկրատիայի այդ ճնշող մթնոլորտը։ Երբէք այնպիսի զարհուրելի չափերով չէր զարգացել այդ կուսակցութիւնը, ինչպէս այդ եղաւ սկսած 1878 թ-ականից, երբ հրատարակվել էին «բացառիկ օրէնքները» սոցիալիստների դէմ։ Եւ ուշք դարձրէք. ոչ մի երկրում այդ վարդապետութիւնը այնպիսի հաստատուն բուն չէ դրել և այնքան խոր ու տարածված արմատներ չէ ձգել, ինչպէս Գերմանիայում և մասնաւորապէս Պրուսիայում, ուր պոլիցիական կազմակերպութիւնը ամենակարող է։

Մ. Ց.

տագը։ (Աղմկալից ծափահարութիւններ. նախագահը զանգահարում է անընդհատ)։ Պարոններ, այստեղ մէկը կարծիք յայտնեց, թէ վերջին տարիներում միապետի վարկը նսեմացել է գերմանական ժողովրդի աչքում։ Ես, որ հանրապետական չեմ, և ոչ էլ ուտոպիական քաղաքականութեան հետևող, սրտի ցաւով պիտի խոստովանեմ, որ անհերքելի է այդ կարծիքը։ Ես պէտք է նկատեմ, որ վերջին 10 տարիների ընթացքում գերմանացիների միապետական զգացմունքը ոչ թէ չէ աճել, այլ շատ և շատ նուազել է (ծափահարութիւն ձախակողմից),—մի բան, որ 14 տարի առաջ երբէք հնարաւոր չէին կարծում։ Պատճառը, պարոններ... Պատճառները շատ են, բայց նրանք պարլամէնտական վիճաբանութեան չեն ենթարկվում *)։ Դրանք այնպիսի փաստեր են, որոնք նոր բողոք ու քննադատութիւն են յարուցանում ոչ թէ միայն բուրժուազիայի մէջ, այլ և աւելի հեռուն՝ ասոցիացիաների և օֆիցէրների շրջաններում։ Գերմանիան միապետական—սահմանադրական երկիր է, բայց համաձայն նշանաբանի՝ sic volo, sic jubeo և regis volontas suprema lex։ Այդ սկզբունքով թերևս կարելի է մի ուրիշ երկրում տեղաբար իշխել, բայց գերմանական ժողովուրդը չի թողնի երկար այդպէս կառավարել իրան»։ (Երկարատև աղմկալից ծափահարութիւն. հռետորին պաշարում են ամեն կողմից և սրտագին շնորհաւորում)։

Ահաւասիկ Բիսմարկի լեզուն. կծու, թունաւոր, ինչպէս ամեն ժամանակ։ Ցպաւորութիւնը մեծ էր, պահպանողականների և կառավարութեան չփոթութիւնը աննկարագրելի։ Այդ ճառը, որ իր մէջ միլիոնաւոր անհատների բաղձանքն էր ամփոփում, տարածվեց արագութեամբ, թափանցեց ժողովրդի բոլոր խաւերը, անցաւ բերնից բերան։ Դա մի ահարկու բողոք էր, որ դուրս էր ցայտում ժողովրդական հրաշակաւոր տրիբունի սրտից, և որին ծափահարում են այսօր ամբողջ քաղաքակիրթ աշխարհը, ազատութեան և առաջադիմութեան բոլոր բարեկամները։

Քաղաքական դումարումների խնդիրը շատ յաճախ յարուցվել է բայլստագում, և նրա առիթով կծու քննադատութիւններ ու հարուածներ քիչ չեն տեղացել մանաւորապէս սոցիալիստների կողմից։ Բայց Բիսմարկի ճառը եղակի նշանակութիւն ունի, դումարումների հարցը միայն պատրուակ եղաւ նրա ձեռքում, և նա յանդուգն ոճով դատափետեց ամբողջ կառավարական սիստեմը՝ սկսած յետին մինիստրից մինչև բարձր։ Եւ զարմանալի բան. ոչ մի պահպանողական բերան չը բացաւ, ոչ մէկը նրանցից չը փորձեց պաշտպանել կառավարութիւնը... Ինչպէս պաշտպանել։ Սնանկութիւնը ակներև է. բարոյական լիակատար սնանկութիւն թէ ներքին և թէ արտաքին քաղաքականութեան մէջ։ Գերմանիայի արևելեան սխրագործութիւնները միայն թուք ու նախատինք են վաստակում իրանց հեղինակի համար...

Ինչի՞ են ձգտում Բիսմարկի այդ արժանաւոր ժառանգները, ինչ են ուզում արեան և երկաթի քաղաքականութեան այդ մոլեռանդ խնկարկուները։ Դրսում կոխոտում են նրանք ժողովուրդների արդար իրաւունքները, ներսում կաչկանդում են ազատ միտքը և հասարակական կեանքի առողջ ու բնական զարգացումը։ Երկու դէպքումն էլ «ոյժի իրաւունք» են հրատարակում, ոտնակոխ անելով «իրաւունքի ոյժը»։ Արհամարհում են սահմանադրական օրէնքները և ճգնում են յետ դարձնել այն, ինչ որ 50 տարի առաջ արդէն կորցրել են։ Նրանք իրանց շուրջը ամենուրեք ուրուականներ են տեսնում, որոնք սպառնում են իրանց էֆիմէր ու յանցաւոր գոյութեան, և ճիգ են թափում՝ նրանք խեղդել այդ ուրուականներին... Ամեն օր մի

*) Կայսրի անունը արգելված է յիշել պարլամէնտական քննադատութիւնների միջոցին։

քանչիւրին՝ իբրև ուտեստի դրամ ամսական 30 դրշ. յատկացնելով, բացի հանդերձեղէնէ, և այլն. Մր. Ցիմբը տօնական օրերուն մէջ գիւղերն ևս շրջելով, նպաստի գործողութիւնը փութով վերջացուցեր և քաղաք վերադառնալով, այնտեղի կարօտելոց ալ՝ իւրաքանչիւրին վիճակին համեմատ՝ նպաստներ բաշխեր և մեկներ է ի Խարբերդ»։

—

Մենք հաղորդեցինք արդէն, որ մայիսի 24-ին բացվեց Թիֆլիսում ընտանի թռչունների ցուցահանդէս։ Այդ ցուցահանդէսը շատ փոքր է, և նշանակութիւն ունի իբրև առաջին փորձ։ Մասնակցողների թիւը շատ չէ. մեր երկրի և նոյն իսկ Թիֆլիսի շրջակայքում գտնվող շատ թռչնապահներ չեն մասնակցում։ Ցուցահանդէսին մասնակցողներից նշանաւոր է Ն. Մամիկոնեանի անտեսութիւնը, որ ընդարձակ է, գործում է արդէն շատ տարի և դրված է գործնական հիմքերի վրա։ Նա ներկայացրել է բրամա-պուտրա, լաֆլեչ, լանգժան և կօխինխին հաւի տեսակներից, հնդկահաւեր, բադեր և թռչնապահութեան վերաբերեալ մի քանի գործիքներ։ Ռիդ ներկայացրել է բրամա տեսակի դեղին և բացգոյն հաւեր իրանց ձագերով. Սուլթանով հնդկահաւեր և կօվրայսկի՝ լանգժան և սպանիական հաւեր։ Գօլտբերգ ներկայացրել է արհեստական կերպով թուխս դրած մի աքաղաղ. Կուրիս՝ հանդէս է բերել հաւեր, թուխակներ և աղաւնիներ. Քալանթարեան՝ կօխինխինի խառնուրդներ. Զիմողցեվ՝ Պաղուայի հաւեր. Առաքելեան՝ բադեր։ Բացի դրանցից մասնակցում են Ուալդին, Ցովիանեաններ և Ակօպով։ Ց. Մելիք-Բախտամեանց ներկայացրել է արհեստական կերպով թուխս դնելու մեքենայ։ Մայիսի 27-ին սկսվեց դնահատող յանձնաժողովի գործունէութիւնը։ Ներկայ ցուցահանդէսում, ի միջի այլոց, աչքի է ընկնում այն, որ մասնակցում են աշակերտներ իրանց խնամած թռչուններով։ Այդպէս են Ցովիանեան, Ղամազով և Եատարժեմսկի, որոնցից առաջինը ներկայացրել է կօխինխին, բրամա, պարսկական և Լենքօրանի հաւի տեսակները, երկրորդը՝ բենտամի մանր հաւեր, իսկ երրորդը՝ կաքաւահաւեր։

—

Մայիսի 28-ին վախճանվեց Թիֆլիսի նահանգի պետական կալուածների վարչութեան կառավարիչ Գամբեկելով, որ այդ պաշտօնը ըստանձնել էր հանգուցեալ Ց. Խատիսեանի մահվանից յետոյ։

—

Կառավարութիւնը ցանկանալով զարգացնել Ռուսաստանում թռչնապահութիւնը, որոշել է 1898 թուին գումարել Ռուսաստանում միջազգային ժողով և բանալ միջազգային թռչնապահական ցուցահանդէս։

—

«Касній» լրագիրը հաղորդում է, որ այս քանի օրերը Բաիլով քաղաքամասում մի կին երեք աղջիկ ծնեց։ Նորածինները ապրելու շատ թոյլ յոյսեր են տալիս։

—

ՇՈՒՇՈՒՅ մեզ գրում են մայիսի 25-ից. «Թեմական դպրոցի տեսուչ Մեսրոպը վարդապետ արձակված է իր պաշտօնից, համաձայն վեհափառի հեռագրի, և կանչված է Էջմիածին քննութիւնները վերջանալուց յետոյ։ Պատճառը անյայտ է»։

—

ԹԷԼԱՒԻՑ Աբէլ քահանայ Սուքիասեանց խնդրում է մեզ ծպել հետևեալը. «1892 թուին Թէլաւում վախճանվեց ժողովրդից յարգված Յակոբ քահանայ Մամագեան, թողնելով տիրուհու հետ 6 անչափահաս զաւակներ՝ կարօտ օրական հացի։ Ինքն ըստ ինքեան այդպիսի դրութեան մէջ պէտք է թողնէր իր ընտանիքը, քանի որ նա բոլոր հոգևոր ծէսերը համարեա թէ կատարում էր ձրի։ Մայիսի 12-ին հանգուցեալի երկյարկանի տունը—որբերի միակ ապաստարանը—ծախվում էր աճուրդով։ Ուզենալով այդ որբերին օգնել՝ ստորագրութեամբ հաւաքեցի 530 ր. և այդ միջոցով ծախուելի տունը գնվեց յօգուտ այդ որբերի։ Այդ 530 ռուբլուց 250 ր. ստորագրական թերթով ստացված է Բագուից։ Անհնարին գտնելով «Մշակի» էջերի մէջ բոլորի ազգանունները տպագրելու, խնդրեմ թող տուէք այդ մարդասէր անձանց հրապարակով յայտնել մեր խորին շնորհակալութիւնը»։

—

ԳՕՐՈՒ գաւառի Ախալքալաք գիւղից մեզ գրում են. «Հայոց ուսումնարանի աշակերտները և աշակերտուհիները մայիսի 13-ին արձակվեցին, իսկ 19-ին քննութիւններ կը սկսվեն։ Մենք բաղդաւոր ենք ուսուցիչների կողմից. նրանք ընդհանրապէս եռանդով են վերաբերվել գործին։ Տեղացիները այլ ևս ամօթ չեն համարում աղջկան ուսում տալը։ Մեր ուսումնարանը, որ ունի 100—120 և երբեմն աւելի աշակերտներ և տարին տալիս է մօտ 20 աւարտող, ցանկալի էր, որ ունենար և մի գրադարան»։

—

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ մեզ գրում են. «Դերասան Մ. Աղայեանց այստեղ եկած՝ կամենում է մի քանի ներկայացումներ տալ։ Տեղական սիրողների մասնակցութեամբ առաջին անգամ խաղալու են «Արչակ II» ողբերգութիւնը և «Օգան Պետրովիչը դժոխքում» կատակերգութիւնը»։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են. «Գարունը Ախալքալաքի սարահարթում այս տարի շատ սկսվեց և շատ կանխաւոր է անցնում. վար ու ցանքը վաղուց վերջացած է. արտերը առ այժմ շատ լաւ են. սպասվում է խոտի և հացահատիկների առատ հունձ»։

—

ԼԱԳՕԴԵՍԻՑ մեզ գրում են. «Մայիսի 18-ին մի հայ վաճառական սպանվեց Ղուսախչոլ գիւղում։ Սպանվածը Ցղնայ գիւղի բնակիչ Ղ. Զ—եանցն է։ Մի քանի թիւրք չարագործներ, նրանց թւում և մի դաղստանցի մօլլա, մէկի միջոցով խաբում են վերոյիշեալ վաճառականին թէ՝ «արի մեր տուն, մի քանի փունտ իւղ կայ տար, իսկ փողի փոխարէն կը դամ ճոթ կը վերցնեմ»։ Վաճառականը միամտաբար գնում է. Նրան տանում են, մըզկիթի մէջ վայր են դցում, կոկորդը կտրում են, սպանելուց յետոյ նրա մօտ եղած փողերը վերցնում են, հանում են հագի շորերը այրում, իսկ դիակը մի չուալի մէջ են դցում և տանում են մզկիթից մի քանի քայլ հեռաւորութեան վրա թաղում են հողի մէջ։ Այսպիսի դէպքեր առաջին անգամը չէ, որ պատահում են այս գիւղում։ Շնարհիւ գիւղի տանուտէրի՝ չարագործներից երկուսին քանդարկեցին, իսկ Մահամեդի աշակերտը անհետացել է»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ահա էլի մի քանի տեղեկութիւններ Թօքատի կոտորածի մասին. «Հայ կաթոլիկ ոտիկան մը՝ Մուղալեան Յարութիւն, հայերը պաշտպանած ըլլալուն համար, և Գայա թաղէն Մօհկեան խաչիկի կինը՝ զինուորներէն սպանված են. Ճամիի Բէկիր թաղէն Ալէկօղեան Ոսկանը՝ հրացանի բռնուած է զինուորներէն նոյն իսկ հրամանատար փաշային հրամանաւ, միմիայն ջարդին ատեն անձնապաշտպանութեան համար զէնք գործածելուն պատճառաւ։ Զափրունեան Յովհաննէսի կին՝ Մաքրուհի կը վկայէ թէ երեք զինուորներ իրարու ետեւէ իր Զարուհի աղջկան պատիւը կը բռնաբարեն, և այսօր այդ վայրագ ակումէն կեսամեռ վիճակի մէջ կը գտնուի հէք աղջիկը։ Առանք մեր գիտցած մանրամասնութիւններն են, բայց նամակներն ընդհանրապէս չեն կրնար զսպել իրենց նողկանքը, զոր կը զգան նկարագրելէ վիճակն այն հայ կիներուն և աղջիկներուն, որոնց պատիւը բռնաբարած են թուրք խուժանը և զինուորները անասնական մոլուցքով։

«Կոտորած և աւարառութիւն տեղի ունեցած են նաև քաղաքէն դուրս, Պիզէռի գիւղին, ս. Օհան Ոսկեբերանի վանքը։ Ցաճարը, դանձարանը և այլն ամբողջովին կողոպտուած են, և վանքին երկու միաբաններն՝ Տ. Մանուէլ և Տ. Մարտիրոս վարդապետներն սոսկալի տանջանքներով սպանուած են։ Նոյն գիւղի գրեթէ բոլոր այրերն սպանուած են. իսկ խատանպօլեանի կինը՝ Հայկանոյշը և Թիւթիւնճի Պետրոսի կոյս աղջիկը գիշեր ատեն առհանգելով լեռը տարած, հոն անանց պատիւը բռնաբարելէ յետոյ թող տուած են։ Պիսակիւն Ճիւղ գիւղը աւարի տուած և 12 անձ սպանած են։ Կիւրճի գեղէն 3 մարդ սպանուած, և միւսներն առ ահի իսլամութիւն ընդունած են. ասոնցմէ սպանուած Սահակեան Գրիգորի կինը իսլամական օրէնքով իր տաքերոջ հետ ամուսնացուցեր են։ Վարաղ գիւղն ամբողջովի կողոպտուած է և չորս մարդ սպանուած։ Թուրհալի գիւղամբին ենթակայ Արխով գիւղի սակաւաթիւ հայերն ալ ամբողջովին ջարդուած են, կըսուի, բացի մէկ աղջիկէ, որ անչուչտ տաճիկ հարէմի մը մէջ կը գտնուի այժմ։

«Զը մոռանանք ըսելու, թէ ամեն իրողութիւն ցոյց կուտայ, որ այս կոտորածը հետեւանքն է եղած կանխաւ չինուած ծրագրի մը, որուն հեղինակը նոյն ինքն մեծ-մարդասպանն է։ Դիտուած է որ կոտորուած հայերն մեծաւ մասամբ իրենց վրա կը կրէին տապարի և կացինի լայն վէրքեր։

«Մինչև մարտ 17 գտնուած և գիտցուած ըսպանուածներու թիւը կը հասնի 130—135. իսկ վիրաւորեալներ միայն քաղաքին մէջ 50, որոնք հեղհեղէ կը մեռնին. քաղաքին մէջ կողոպտուած տուներն են 300, իսկ խանութները 60»։

—

Բէյտերի գործակալութիւնը հաղորդում է, թէ Թիւրքիայում սկսել են նշանակել աչքի ընկնող պաշտօնների համար քրիստոնեայ աստիճանաւորներ։ Երկու հայ և երկու յոյն ստացել են փոխ-նահանգապետի պաշտօններ։

—

Մուշից եկողները հաղորդում են, որ այս գարնան Մուշի դաշտի ցանքերը և խոտահարքը լաւ վիճակի մէջ են. միայն տեղ-տեղ ցանքս քիչ է արված։ Եթէ երաշտութիւն չը պատահի, հունձը կարող է շատ առատ լինել։

ԲՕԼԳԱՐԻԱ

—

Վերջին ժամանակներս Բոլգարիայում աւելի սաստկացաւ պատերազմասէր ձգտումը, որ գոյութիւն ունէր յոյն-թիւրքական պատերազմի սկզբից։ Թիւրքիայի դէմ գրգռումը աճում է և ամեն կողմից լսվում է պահանջ, որ բոլգարական կառավարութիւնը զօրք ուղարկի Մակեդոնիա՝ ազգային իդեաները կատարելու համար։ Պատերազմասէր շարժումը սաստիկ է մանաւանդ զօրքերի մէջ և քաղաքական շրջաններում։ Բոլգարական զօրքի Մակեդոնիա մտնելը մի սարսափելի հրդեհ կը վառէր ամբողջ Բալկանեան թերակղզում. Սերբիան, Չերնոգորիան և Ռումինիան, ի հարկէ, չէին մնայ սոսկ հանդիսատես թիւրք-բոլգարական պատերազմին, իսկ հետևանքը կը լինէր Աւստրիայի միջամտութիւնը։ Ամեն ինչ այժմ կախված է բոլգարական կառավարութիւնից։ Բոլգարական պաշտօնական լրագիրը՝ «Миръ» ասում է. «Բոլգարիան ունի միայն մի հատ անկեղծ բարեկամ և հովանաւոր—Ռուսաստանը, և պիտի հետևէ նրա իմաստուն և զգոյշ քաղաքականութեան»։

ՆԱՄԱԿ ՇՎԵԴԻԱՑԻՑ

—

Մայիսի 20-ին

ՍՏՕԿՀՕԼՄԻ 1897 ԹԻՒ ԱՐՈՒԵՍՏԱՀԱՆԴԷՍՆ

II

Արուեստահանդիսին վայրն է քաղաքին կենտրօնէն տաս վայրկեան հեռաւորութեամբ Djurgården (Ճիւրգօռդըն) կոչված ընդարձակ կղզին, որ ժամանակաւ արքունի որսատեղի եղած է եղջերուներու և այծեամներու, և այն պատճառաւ կոչված Երէներու պարտէզ (Djurgården=գերմաներէն Thierdarten)։ Ի շրջակայս Ստոքհոլմի չը-կայ աւելի զուարճալի զբօսավայր։ Ամառային կիւրակէ և տօն օրերը՝ քաղաքին ամեն թաղերէն այստեղ կը դիմեն հազարաւոր անձինք, ոմը հետիոտս, ոմը կառքով, ոմը շոգենաւակով կամ ձիաքարշով կամ ընթացարանով (գաղ. bicycle). կերուխում սիրողներն՝ ի ճաշարան Hasselbacken պարտիզին,—հին Շուեդի յիշատակները փնտռողներն՝ ի Skansen, ուր կը տեսնվեն նաև զանազան գաւառներու գոյնզգոյն տարազներով զարդարված գեղջուկներ և գեղջկուհիներ, ինչպէս և քանի մը լապոնիացի ընտանիքներ՝ իրենց ձողաձաւակ տաղաւարներով և հիւսիսային եղջերուներով,—երգի և պարի վարպետներն ալ ի Tivoli, ուր թէ ճաշարան կը գտնուի, թէ սրճարան։ Իսկ գործաւորներու ընտանիքներն, որոց համար ծանր է Skansen և Tivoli պարտէզներուն մուտքը վճարել, և Hasselbacken-ի ճաշարանն ալ թանկ, հետևելին կառնուն ուտելիքով լի սակառներ, և նստապետական պարզութեամբ խոտերուն վրա փռուած՝ կուտեն իրենց անպաճոյճ կերակուրները և կը պարպեն իրենց գարեջրոյ շիշերը, ձրի վայելելով մօտաւոր սրճարաններու երաժշտութեանց հնչիւնները, զորս քամին կը բերէ իրենց։

Գլխաւոր չէնքն Արուեստահանդիսին է ճարտարութեանց փայտակերտ պալատն, կամ ինչպէս չուեդերէն կը կոչուի՝ ճարտարութեանց սրահն (Industrihallen), որ 15,000 քառակուսի մետրի տարածութիւն կը գրաւէ։ Մինչև յարդ կառուցուած չէ քան զայս մեծադոյն փայտեղէն չէնք, որոյ գերաններուն, սիւներուն և տախտակներուն համար գործածուած փայտի քանակութիւնն 34,000 ծառ կը ներկայացնէ։ Պալատին ճակատն, 97 մետր բարձրութեամբ զըմբէթն և զմբէթին չուրջը կանգնած չորս աշտարակներն՝ ինքնուրոյն կերպարանք մը կու տան ամբողջ շինուածին։ Այստեղ են Շուեդիայի ձեռագործաց, արուեստից և ճարտարութեանց 983 ներկայացուցիչներ. Նորուեգիոյ՝ 421, Դանիոյ՝ 213, Ռուսաստանի՝ 259, որոց վեցն հայ են, այն է՝ Գուլիչամբարեան Ստեփան (Պետերբուրգ), որ ի ցոյց դրած է գրքեր՝ «Բարձէթն իբրև վառելիք», «Բարձէթի չահագործութիւնն Միացեալ-Նահանգաց մէջ», «Հանդէս (Revue) միջազգային վաճառականութեան, 1888—1893»։ Էնֆիաճեանց Ա. Ա. (Տփղիս), ծըխախոտ։—Խօճայեան Կարապետ և իր որդին՝ Յակոբ (Պետերբուրգ), կովկասային մանրմունր արծաթեղէն զարդեր, ռուսական ոճով փայտեայ անօթներ և կահեր, արեւելեան բանուածքներ և գորգեր։—Տէր-Գրիգորեան, Մէյլանովով և ընկ. (Բագու), ծխախոտ։—Տէր-Յակոբեան Յովհաննէս (Մոսկուա), քարձէթ և ուրիշ հանածոյ իւղեր։—Ղուչուկեան (կամ թերևս Տիւչիւկեան) Ա. Գ. (Ախալցխա), արծաթէ գործուածներ։ Մերազգիներէն միայն Խօճայեան Կարապետ և Յակոբ պարոններն անձամբ կը գտնուին ռուսական բաժնին մէջ, և գոհ կերևին իրենց վաճառումէն՝ որ անտարակոյս աւելի չահաբեր կըլլայ երբ սպասված 50—60 հազար գերմանացիներն, և 100 հազար անգլիացիներն և ամերիկացիներն հասնեն ի Ստոքհոլմ, թող հազարաւոր գաւառացի չուեդացիներն, նորուեգիացիներն և դանիացիներն։

Գարեջրանոցներ և սրճարաններ չեն պակսեր արուեստահանդիսին լայնածաւալ շրջապատին մէջ. կը պակսի միայն ռուս հեշտեռացն կամ ինքնեռացն (սամավար), կը վաճառուի ռուսական հաց, մեծ թէ փոքր քանակութեամբ՝ չը գիտեմ, բայց ապահով եմ որ ռուսական թէյն չուեդերէն ախորժով պիտի խմուէր, մանաւանդ այժմու զով եղանակիս մէջ։

Յատուկ չէնքի (Maskinhallen, Մաշինհալլըն) մէջ են չուեդական, նորուեգիական և դանիական մեքենաներն, իբր 10,000 քառակուսի մետրի տարածութեան վրա. և այս է գրեթէ ըստ հասարակաց կարծեաց՝ արուեստահանդիսին ամենէն հրահանգիչ և հետաքրքրական բաժինն, գլխաւորապէս չուեդականն։ Այստեղ պայծառ կը տեսնվի հազիւ հինգ միլիոն փոքրիկ ազգի մը հանճարն՝ երկաթի և պողպատի բիւրակերպ գործածութեանն մէջ։ Շուէտ ոչ միայն չը կարօտիր օտար երկիրներու ամէն տեսակ մեքենաներու և գործիներու համար, այլ և օտար երկիրներէ շատերն կը գտնեն իր հնարած գործիները, զոր օրինակ de Laval-ի Separator (գաղ. écrémeuse) կոչուած գործին՝ կաթը սերէն զատելու համար. այնչափ մեծ է այս գործույս գըտած ընդունելութիւնն բոլոր աշխարհի մէջ և այնչափ շատ են յանձնարարութիւնքն՝ որ 1000 քրոնայի (=500 ռուբլիի) հրապարակ հանուած բաժնեթղթերն այսօր կարժեն 18,000 քրոնա (=9,000 ռուբլի)։ Ո՛ւր են այն ժամանակներն երբ տակաւին ոչ Լինդէս կար, ոչ Բերզելիոս և չուեդացիք ճանաչուած էին միայն իբր քաջ պատերազմողք. երբ բովանդակ Եւրոպա կը սասանէր յանուանէն Շուեդի՝ որոյ յաղթական բանակներն կը մտնէին ի Վարշավ, ի Պրագա, և ի Լեմբերգ՝ ի մեծ զարհուրումն հայ կաթոլիկ տէր Յակոբ Բաղդասարեան քահանային, որ չը գիտէր թէ ինչպէս իր անձը ապրեցնէ «հերետիկոս» Ստէնբոքի զինուորներէն *). երբ թշնամեաց հե-

*) Տես Հ. Ղևոնդ Վ. Ալիշան, Կամենից, (Ս. Ղազար, 1896,) երես 147։ Բաղդասարեան քահանայի կոչած „ձէնիբալն Ըշտէմպէք՝ այը զուռզ և անսղրմ“, Շուեդացւոց մեծանուն զօրապետներէն մին է, Մագնոս Ստէնբոք (Magnus Stenbock), մեռեալ ի 23 փետրվարի 1717։

ծելազօրքն և հետևակազօրքն՝ միայն չուեստացիներէն փախչելու համար կը ցուցնէին իրենց ոտից արագութիւնը, ինչպէս ըսած է Բոսիւէ՝ Աննա Գոնզազեան իշխանուհւոյն դամբանականին մէջ։ Այժմ իբրև զինուորական պետութիւն Շուէտ մեծ նշանակութիւն չունի, քանզի ինչ են իր 400,000 զօրքն միւս պետութեանց միլիոնաւոր զօրաց համեմատութեամբ. բայց կարոլոս ԺԴԻ (Ոսկար Բ. թագաւորի պապուն) օրերէն ի վեր՝ գրեթէ իննըսնամեայ խաղաղութեան ժամանակ՝ մեծապէս յառաջադէմ գտնուած է փոքրիկն Շուէտ գիտութեանց, արուեստից և ճարտարութեանց անարիւն ասպարիզին մէջ՝ յորում յաջողութեամբ կրնայ մրցել որ և է ազգի հետ։

Նորայր Ն. Բիւզանդացի

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թէհրան, մայիսի 14/26-ին

Շահի Եւրոպա երթալը քաղաքական ինչ-ինչ պատճառներով բոլորովին խափանվեց։ Դրա մի պատճառն եղել է, ըստ երևոյթին, Պարսկաստանի հրէաների հալածման խնդիրը, որի համար մահմեդական համայնքը խիստ յուզված և լարված է մինչև անգամ կառավարութեան դէմ, որը դեսպանների միջամտութեամբ պարտաւորվեց հրէաներին պաշտպանութիւն ցոյց տալ։ Այս խնդիրը բաւական սուր կերպարանք է առել, այնպէս որ կառավարութեան և ժողովրդի կրօնական ներկայացուցիչների մէջ մասնաւոր բանակցութիւն է բացվել. կրօնականները բացարձակապէս պահանջում են, որ նախ կառավարութիւնը յետ առնէ հրէաներին ցոյց տուած պաշտպանութիւնը, և ապա ամեն մի հրէայ ըստ հին սովորութեան իր կրծքին ունենայ մի կարմիր կարկատան, որի զօրութեամբ ամեն մէկը տարեկան մէկ «թիւմէն» տուրքի տակ պիտի մտնէ։ Իսկ կառավարութիւնը ժողովրդի պահանջներին դիմադրելու անզօր գտնվելով, առաջարկել է զէթ այդ կարմիր կարկատանը փոխվի պզնձէ նշանի, որ կառավարութիւնը ինքը պիտի տայ հրէաներին։ Բանակցութիւնը դեռ չարունակվում է ժողովրդի և կառավարութեան մէջ, իսկ մէջտեղում խիստ հալածվում է անպաշտպան հրէան։ Հրէաների դրութիւնը անտանելի է եղել այն պատճառով, որ չը գիտեն թէ որին պիտի հնազանդվեն. կառավարութեան հրամաններին հետևելով առիթ են տալիս ժողովրդի կատաղի նորանոր հալածանքներին, իսկ հակառակ դիրք բռնած ժամանակ էլ՝ պատժվում են կառավարութեան կողմից։ Երկու կրակի մէջ մնացած՝ երեսը որ կողմ էլ որ շուռ են տալիս՝ այրվում են. նոյն իսկ նրանց պաշտպանութեան համար նշանակված կառավարութեան ոստիկանները և զինուորները, իրանց հոգու և կրօնական պարտականութիւն են համարում մուրտատ (?!) հրէային հալածել և տանջել։ Հրէաների գլխին կանգնած է դժբախտութեան մութ մի ամպ, որ այսօր կամ վաղը վերջապէս պայթելով, կարող է խեղդել և կլանել այդ մի բուռ թշուառ արարածները, որոնք Պարսկաստանի մէջ թւով 80,000-ի են հասնում։ Եթէ ժողովուրդը կատարել տայ իր անդութ պահանջը, այդ մի տեսակ օգուտ պիտի տայ արքունական գանձին, այսինքն տրվելիք տուրքը 80,000 թիւմէնի պիտի հասնէ, որը հարկաւ պիտի մտնէ արքունական գանձարանը։

Մայիսի 13/25-ին, մեծ փառքով տեղս հասաւ պարսից գահի թագաժառանգը, որը, ինչպէս լսում ենք, միշտ պիտի մնայ մայրաքաղաքումս։ Այս դէպքը լինելով պարսից իշխանութեան ընդհանուր սովորութեան դէմ, որով ամեն մի թագաժառանգ գահակալի կողմից ուղարկվում էր Թաւրիզ (աւելի աքսորելու մտքով) բնակելու, տարբեր-տարբեր կարծիքների տեղի է տալու. ոմանք հաւատում են թէ Շահի ճամբորդութեան ժամանակ պիտի կառավարէ գահը. իսկ պարագաներին լաւ ծանօթ անձանց կարծիքն այն է, որ Շահը աչքի առաջ ունենալով իր ֆիզիքական խախուտ և անհաստատ դրութիւնը, իբրև նախազգուշութիւն որոշել է թագաժառանգին աւելի մօտ պահել իր գահին...

Մայիսի 13/25-ի երեկոյեան երկրորդ անգամ հայկական բեմի վրա ներկայացվեց «Սկալէնի խարդախութիւնը» պարսկերէն լեզուով. դերասանների և բեմի կողմից ամեն ինչ աջող էր և փայլուն. սակայն ցաւալի էր, որ ներկայացման կարգադիր մասնախումբը, թէև ինքն առաջարկեց և խնդրեց դերակատարներից երրորդ ներկայացումը, սակայն բացի այն որ գործի բոլոր ծանրութիւնը թողել էին թատերասէրների և դերասանների վրա, տոմսակներն էլ իրանց գրպանումը մինչև վերջին րոպէն պահելով, գրեթէ ոչինչ չէին ծախել, այնպէս որ սրահի մի երրորդ մասը հազիւ էր լցվել հանդիսատեսներով. բացի այդ, նոյն իսկ ներկայացման ժամանակ յարգելի պարոններից հազիւ թէ 2 հոգի էին ներկայ. կարծես թէ մէկ ներկայացում տալը մեծ յոգնութիւն էր պատճառել այդ պարոններին։ Այս իրողութիւնը խախտեց թատերասէրների և դերասանների զէպի այդ պարոններն ունեցած վստահութիւնը։ Այս անախորժ դէպքի ընթացքում միայն մի բան կար, որ ոգեորում էր դերակատարներին, այն է հայր Այվազեանի ներկայութիւնը և նրա անընդհատ խրախուսանքն ու քաջալերութիւնները։

Ս. Գ. Ժիւլիթեր

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«Ծաղիկ» շաբաթաթերթի մէջ կարդում ենք. «Ամենայն հայոց կաթողիկոսին հրամանաւ, Ամերիկայի Հայոց հովուութիւնն երկուքի բաժնուելով, Վաղինակ վրդ. կարգուեր է Բրօվիդենսի և շրջակայից հովիւ, իսկ Մաշտոց վրդ. Ուղղերի և շրջակայից։ Երկուսն ալ արդէն մեկներ են իրանց պաշտօնատեղին»։

***

Կ. Պոլսի լրագիրների նորութիւնը.— «Մելքիսեդեկ Արքեպիս. Մուրատեանց, իր յոգացաւերը դարմանելու համար, երեկ ուղևորեցաւ Պրուսայի ջերմուկներ»։

***

Ի մեծ բաղդաւորութիւն թիւրքայ հայերի՝ «Լայս» լրագիրը, ինչպէս ուսեցում են Պոլսի լրագիրները, այժմ սկսել է կանոնաւոր կերպով հրատարակվել, շաբաթը երկու անգամ։ Ուրեմն շաբաթը երկու անգամ այդ թերթի խմբագիրը, յայտնի թրքամոլ և... վանան վարդապետ Տէր-Մինասեան միջոց կունենայ իր փչացած սրտի և գլխի արդիւնքները հաղորդելու Հայաստանեայց աշխարհին...

,ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ 27 մայիսի։ Մայիսի 27-ին «Բօսիա» չոգենաւը, փոխ-ծովակալ Սկրիդլովի հրամանատարութեամբ, ճանապարհ ընկաւ Անգլիա, մասնակցելու յօբելեանական հանդէսներին։ «Բօսիա» չոգենաւով գնում է և Մեծ Իշխան Կիրիլ Վլադիմիրովիչ։

Մայիսի 26-ին Վարշավայի երկաթուղով արտասահման ճանապարհ ընկան Մեծ Իշխան Սերգեյ Ալէքսանդրովիչ իր Օգոստափառ ամուսնուհետ, որոնք գնում են յօբելեանական հանդէսներին մասնակցելու Մեծ Բրիտանիայում։

ՍՕՖԻԱ, 27 մայիսի։ Հեղեղը սարսափելի ուժով տարածվում է Սերբիայում և Բոյգարիայում։ Վնասները երկու պետութիւններում ահագին են։

ԼՕՆԴՕՆ, 27 մայիսի։ Կ. Պոլսից «Standard» լրագրին հաղորդում են, որ Բերլինի թիւրքայ նախկին դեսպան Զիա-փաշա և Ամէնքի նախկին դեսպան Ասիմ-բէյ հրաման ստացան օգնել արտաքին գործերի մինիստրին խաղաղութեան բանակցութիւնների ժամանակ։

ԿԱՆԷՑԱ, 27 մայիսի։ Նահանգապետի շրջաբերականը հերքում է երկիւղալի տեղեկութիւնները։ Ծովապետների հետ համաձայնութեամբ նահանգապետը վճռեց հալածել յանցաւորներին։

ԼՕՆԴՕՆ, 27 մայիսի։ Զէդդայից ստացված տեղեկութիւնների համեմատ, այնտեղ հիւանդացան մի քանի մարդիկ այնպիսի նշաններով, որոնք նման են ժանտախտի նշաններին։

ՀՕՆՕԼՈՒԼՈՒ, 27 մայիսի։ Հավայի կառավարութիւնը հրաժարվեց բաւարարութիւն տալ Եապոնիային, որ վերջինը պահանջում էր այն պատճառով, որ Հավայի կառավարութիւնը զիմադրում էր 400 եապոնական գաղթականների ավ իջեցնելուն։

ԲԵԼԳՐԱԴ, 27 մայիսի։ Երկաթուղային հաղորդակցութիւնը մեծ մասամբ վերականգնված է, կանոնաւոր պօստային յարաբերութիւն հաստատվեց։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Մայիսի 27-ին

Լօնդոնի վրա	10 ֆունտ արժէ. .	93 ր.	95 կ.
Բերլինի վրա	100 մարկ — . .	45 »	90 »
Պարիզի վրա	100 ֆրանկ — . .	37 »	32½ »
Ոսկի	— — արժէ . .	— »	— »
Մաքսային կուպօններ	— . .	149 »	— »
Բօրսային դիսկօնտ	— . .	5½ —	7% »
4% պետական ըէնտա		98½ »	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.		285 »	— »
— — երկրորդ —		246½ »	— »
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի		207¼ »	— »
5% պետական երկաթուղ. ըէնտա		— »	— »
4% ներքին փոխառութեան . . .		98½	— »
4½% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի		100⅞ »	— »
Ազն. կալ. Գետ. բանկի խաղարկութ.		— »	— »
4½% վկայակ. գիւղ. հող. բանկի		101⅝ »	— »
Փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ. .		— »	— »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաները.		101½ »	— »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.		101⅜ »	— »
Օդեսայի — —		100 »	— »
Թիֆլիսի — —		99⅝ »	— »
Թիֆլիսի կալ. բանկի 6% — . .		101 »	— »
5% — — . .		99⅝ »	— »
Քութայիսի — — . .		101 »	— »
5% — — . .		99½ »	— »

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՑՈՒՆԻՍԻ 5-ԻՑ ԲԱՑՎԵԼՈՒ ԵՆ
Մ. Ա. ՍՈՒՆԳՈՒԿԵԱՆՑԻ
(Ծնեալ Արղուսեան)
Նախապատրաստական
ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

որտեղ կարող են պատրաստվել երեխաներ աշնան քննութիւնների և վերաքննութիւնների համար։ Աշակերտների ընդունելութիւնը՝ մայիսի 26-ից, ամեն օր, ժամը 12—2, և կէսօրից յետոյ 5—7. Վօզնեսենսկայա փողոց, № 18։
(№ 61) 2—4

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ
ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վ. օրօնցօվի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վենեբական (սիֆիլիս) և ներքին հիւանդութիւնների։

Դ. Գ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

կին-բժիշկ ԴՈՒՆԱՅԵՎԱ-ԲՈՒԴԵՆԿՕ—10—11 ժ. կանանց և երեխայոց հ.

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. կանանց հ. չորեքշաբթի, ուրբաթ և շաբաթ, իսկ 1½—2 ժ. երկուշաբթի, երեքշաբթի և հնգշաբթի։

Ի. Ֆ ՊՐՕՏԱՍՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ՊՐՕՏԱՍՍԵՎԻՉ—5—6 ժ. երեքշ. հինգշ. և շաբաթ

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—6½—7½ ժ.

Հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ են անում մզի, խիարեան, կաթի և այլն։

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Поступила въ продажу новая книга
В. ЛУНКЕВИЧА
СРЕДИ ЖИВОТНЫХЪ
Очеркъ изъ жизни животныхъ, для дѣтей старшаго возраста. Съ 50 рисунками въ текстѣ.
ЦѢНА 50 КОП.
Продается въ ТИФЛИСѢ, въ Центральномъ книжномъ магазинѣ и въ книжномъ магазинѣ Хиддекеля. 3—5

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթիից,

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն և Պօլիս։ Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, յունիսի 11/23-ին ԱՆԱՏՕԼԻԱ չոգենաւը, նաւապետ ԲԻԱՆԿԻ և այդպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամի 4-ին ճաշից յետոյ։ Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից

Պակաս գներով։ Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների տանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վ. Վիկսոր դ'Արնօին, Նաբերէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդակեանին, Սիոնի փող. նախկին Արծրունու քարվանսարա։ ԲԱԳՈՒ—պ. Ս. Դիլղարեանին, Կօլիբեանինսկայա հրապարակ։ ՆՕՎՈՐՕՍՍԻՅՍԿ—պ. Մելխիօր Հերշինրօզերին։ (№ 16) 4—20

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ-ԸՆԴՈՒՆԱՐԱՆ ԵՐԵՒԱՆՈՒՄ
Մ. Մ. ՄԱՐԳԱՐԵԱՆՑԻ

Հիւանդների ընդունելութիւնը սկսվելու է յունիսի 1-ից։ Ցանձն է առնում հիւանդ ատամներ բժշկել, լցնել, և նոր ատամներ շինել։ (№ 56) 6—10

ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻԶՈՑՆԵՐ
ՐԻՍ-ԳՈՒՏՄԱՆԻ
(Ցնային գործածութեան համար)

ՀՆԴԿԱԿԱՆ ՄԻՇՈՒՆԱ, այն է հաստատ մահ մկներին, խլուրդներին և ուրիշ կրծողներին։ Այս միջոցը արտաքսում է այդ կենդանիներին գլխաւորապէս բնակարաններից, այնպէս որ նրանք չեն մնում դեռնայարկի տակ և չեն տարածում գարշահոտութիւն։

ՄԼԱԿՆԵՐԻ ԴԷՄ ՀԵՂՈՒԿ, ոչնչացնում է նրանց ընդմիշտ։ Նա չատ հաճելի հոտ ունի և բիծ չէ թողնում ճերմակեղէնի, կօշիկների և կարասիքի վրա։ Փոշիացնելով նրան, սենեակի օդին հաճելի թարմութիւն են հաղորդում և միաժամանակ հալածում են ցեցը, ճանճը և մոծակները։

ՓՈՇԻ՝ ՄԻԶԱՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ամենայարմար միջոցն է բոլոր միջատները և նրանց սաղմերը բոլորովին ոչնչացնելու համար։ Այդ փոշին անփոխարինելի է լուսեր և մլակներ ոչնչացնելու համար անկողիններում, ներքնակներում, թաղիքով պատած փայտային պատերում։ Ոչնչացնելով ցեցը և չունենալով նաֆթալինի անհաճոյ հոտը, այս փոշին բոլորովին փոխարինում է նրան. դրա համար հարկաւորութիւն չը կայ ամառը տալ մուշտակները և ուրիշ մորթեղէն իրերը պահելու համար։ Փոշու ազդեցութիւնը, երբ նրան գործադրում են ամեն տեսակ միջատների, մրջիւնների դէմ—գրեթէ վայրկենական է—հետևանքը զարմանալի։ Հարցնել դեղավաճառական խանութներում։
(№ 23) 37—50

Дозволено цензурою, Тифлисъ, 28 мая, 1897 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.